

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Մհեր Շահգեղյանի, Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Լևոն Դոխտյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-731-04.03.2015-ՖՎ-010/0) վերաբերյալ:

Նախագծով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից հետո վարկատու հանդիսացող կազմակերպություններին (առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ և այլ վարկատու կազմակերպություններ) պարտավորեցնել իրենց կողմից տրված բոլոր արտարժույթային վարկերը, ինչպես նաև արտարժույթային փոխառությունները վարկառուի պահանջից ելնելով վերածել դրամային՝ վարկառուի դիմելուց հետո առավելագույնը 30 օրացուցային օրվա ընթացքում, որի վերահաշվարկի համար հիմք կընդունվի վարկային (փոխառության) պայմանագրի կնքման ամսաթվով առկա՝ Հայաստան-
namak-TN029.02.04.2015- 23_156DB28

տանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքը:

Հայտնում ենք, որ նախագծով առաջարկվող քաղաքականության իրականացումը ենթադրում է միաժամանակյա էական ծախսեր, որի ծավալի վերաբերյալ կանխատեսում անել հնարավոր չէ: Նշված միջոցառումը պետական միջամտությամբ իրականացնելու համար, առկա արտարժույթային վարկերը մարելու նպատակով, արտարժույթային ահռելի ռեսուրսների ձեռքբերման անհրաժեշտություն կառաջանա: Իսկ արտարժույթի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճը կարող է հանգեցնել տնտեսության և ամբողջ ֆինանսական համակարգի կաթվածահարման: Նշված զարգացումները տեղի կունենան նույնիսկ արտարժույթային վարկերի 10%-ի՝ նշված մեխանիզմով փոխարկման դեպքում:

Բացի դրանից, ներկայումս արտարժույթային վարկերի մեծ տեսակարար կշիռ ունենալու պատճառը պայմանավորված է բանկային համակարգի ավանդների կառուցվածքով, որի շուրջ 64%-ը 2015 թվականի փետրվարի վերջի դրությամբ կազմել են արտարժույթային ավանդները: Եթե բանկերն իրենք կրեն արտարժույթային ավանդների վերաձևակերպման ռիսկը, ապա նրանց մոտ կառաջանա հսկայական արժույթային ճեղքվածք, և արժույթային փոխարժեքի նույնիսկ չնչին տատանումը կարող է հանգեցնել բանկային համակարգի կապիտալի մեծ կորուստների՝ բանկերում առաջ բերելով վճարունակության խնդիրներ և դարձյալ խաթարելով ամբողջ ֆինանսական համակարգի կայունությունը:

Նշենք նաև, որ նախագծով չի լուծվել արդյունավետ այլընտրանքային տարբերակներ առաջարկելու խնդիրը: Դրա մասին են վկայում նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում պետք է ընդունի համապատասխան օրենսդրական ակտեր օրենքով նախատեսված քաղաքացիների պարտավորու-

թյունների վերակառուցման արդյունքում առաջացած պայմաններում, վարկային և բանկային կազմակերպություններին աջակցության գործողությունների ծրագիրը:

Հաշվի առնելով նշվածը՝ նպատակահարմար չենք համարում նախագծով առաջարկվող քաղաքականության իրականացումը:

Միաժամանակ, նախագիծը, պարտավորությունների վերակառուցման հնարավորություն նախատեսելով միայն պարտավորությունները չկատարած անձանց համար, անհավասար դրություն է ստեղծում ազգային արժույթի փոխարժեքի տատանման բացասական ազդեցությունը կրած անձանց միջև՝ ոտնահարելով օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Ավելին, նախագիծն անմիջականորեն շոշափում է բանկերի և վարկային կազմակերպությունների գույքային իրավունքները: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման՝ սեփականության իրավունքի միջամտությունը համատեղելի է գույքից անարգել օգտվելու սկզբունքի հետ, միայն, եթե ապահովված է «արդարացի հավասարակշռություն» հայցվող իրավունքների պաշտպանության միջև: Նախագծի ընդունումը կրիսի վարկառուների շահերից, սակայն դրանով իսկ զգալի վնաս կպատճառի բանկերի և վարկային կազմակերպությունների շահերին: Նշվածից հետևում է, որ կիրառվող միջոցառումը չի կարող բխել հասարակական համընդհանուր շահից, հետևաբար, կրել կամ հետապնդել իրավաչափ նպատակ:

Նախագծով ներկայացված մի շարք դրույթների վերաբերյալ հայտնում ենք՝

1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները չեն բխում նախագծի կարգավորման առարկայից: Մասնավորապես, նշվում է, որ տարադրանով չկատարված պարտավորություններ ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դիմումի հիման վրա բանկային, վարկային կամ այլ կազմակերպությունները պարտավոր են իրականացնել պարտավորությունների վերակառուցում: Դրույթի նման ձևակերպումից

բխում է, որ բանկերը ցանկացած դեպքում, երբ դիմում է ներկայացվում, պարտավոր են իրականացնել տարադրամով պարտավորությունների վերակառուցում: Մինչդեռ, տարադրամով պարտավորությունների վերակառուցումը, ըստ նախագծի, նպատակ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նվազեցնելու ազգային արժույթի փոխարժեքի տատանման բացասական ազդեցությունը:

2. Նախագծի վերնագիրը սահմանված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին», որից բխում է, որ տվյալ օրենքի նախագիծը պետք է կարգավորի միայն արտարժույթային վարկերի վերաձևակերպմանն առնչվող հարաբերությունները, մինչդեռ նախագծով կարգավորվում են նաև արտարժույթով տրված փոխառությունների վերաձևակերպման հետ կապված հարաբերությունները: Ելնելով նշվածից՝ առաջարկում ենք հստակեցնել կամ նախագծի վերնագիրը կամ կարգավորման առարկան:

3. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, իսկ հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկում ենք նախագիծը խմբագրել:

4. Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները: Նախագծում ոչ հետևողական կերպով կիրառվում են «վերաձևակերպում», «վերակառուցում» և «վերակառուցվածքայնացում», «փոխառություն» և «փոխառնություն» հասկացությունները, ինչը հանգեցնում է տարընթերցումների: Հարկ է կիրառել նաև «տարադրամով վարկ»

կան «արտարժութային վարկ» հասկացություններից միայն մեկը՝ նախապատվությունը տալով վերջինին:

Նախագծում ոչ հետևողական կերպով են կիրառվում նաև «պարտականություն» և «պարտավորություն» հասկացությունները: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2011 թվականի հունիսի 14-ի N ՄԴՌ-975 որոշման համաձայն «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամաարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ:»:

Հիմք ընդունելով օրենքի 36-րդ հոդվածը՝ առաջարկում ենք նաև նախագծում կիրառվող «տվյալ օրենք» և «ներկա օրենք» բառերը փոխարինել «սույն օրենք» բառերով:

5. Նախագծի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն «Սույն օրենքը ուղղված է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար ազգային արժույթի փոխարժեքի տատանման բացասական ազդեցության նվազեցմանը, որոնք տարադրամով վարկերի և փոխառությունների գծով ունեն կնքված կազմակերպությունների հետ չկատարված պարտավորություններ:»:

Առաջարկում ենք նշված դրույթը խմբագրել, քանի որ վերջինս տարընթերցումների տեղիք է տալիս: Մասնավորապես, անհասկանալի է «կնքված կազմակերպություններ» հասկացությունը: Նախագծից պարզ չէ նաև, թե ինչ է իրենից ենթադրում «ազգային արժույթի փոխարժեքի տատանման բացասական ազդեցության նվազեցումը», ինչպես

նան ինչ չափանիշներով է որոշվելու, թե ինչ չափի նվազեցումների վրա է տարածվելու օրենքը:

6. Նախագծի 3-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն «Վարկային և փոխառնության պայմանագրային պարտավորությունների վերակառուցումն իրականացվում է վարկային և փոխառնական պայմանագրերով նախատեսված պայմանագրի օգտագործման համար որոշված վճարումների և վարկային պարտավորություններ մնացորդը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով վերահաշվարկման և ամրագրման միջոցով, ինչի վերաբերյալ վարկատուի և վարկառուի միջև արձանագրվում է հավելյալ համաձայնագիր:»:

Առաջարկում ենք պարզաբանել «պայմանագրի օգտագործում» արտահայտությունը: Անհասկանալի է նաև «արձանագրվում է հավելյալ համաձայնագիր» արտահայտությունը: Նախագծի 3-րդ հոդվածի չորրորդ պարբերության համաձայն «Վարկի օգտագործման համար վճարի չափը որոշվում է կողմերի միջև վարկավորման (փոխառնական) պայմանագրին հավելյալ համաձայնագրով:»: Այդ կապակցությամբ անհասկանալի է, թե «վարկավորման պայմանագրին հավելյալ համաձայնագիրը» այն համաձայնագիրն է, որին հղում է կատարվում նույն հոդվածի առաջին պարբերությունում, թե ոչ: Տարբերեցման տեղիք է տալիս նաև «վարկի օգտագործման համար վճարի չափ» հասկացությունը:

7. Առաջարկում ենք խմբագրել նախագծի 3-րդ հոդվածի հինգերորդ պարբերությունը՝ սահմանելով, թե ինչի նկատմամբ է հաշվարկվելու 12.2-րդ տոկոսը:

8. Առաջարկում ենք պարզաբանել նախագծի 3-րդ հոդվածի ութերորդ պարբերությունը:

9. Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:»: Այդ կապակցությամբ, հայտնում ենք, որ նախագծի 5-րդ հոդվածի առաջին պարբերությունը, ըստ էության, հանդիսանում է նախագծի 3-րդ հոդվածի երկրորդ պարբերության

կրկնություն, իսկ 1-ին հոդվածի առաջին պարբերությունը հակասում է 2-րդ հոդվածի առաջին պարբերությանը: Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում պարտավորությունների վերակառուցման հնարավորություն նախատեսում է միայն հիփոթեքային ապահովմամբ պարտավորությունների համար: Մինչդեռ, նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար ազգային արժույթի փոխարժեքի տատանման բացասական ազդեցության նվազեցումը, վերաբերում է բոլոր տեսակի վարկերին և փոխառություններին առնչվող չկատարված պարտավորություններին:

10. Առաջարկում ենք պարզաբանել, թե որն է նախագծի 5-րդ հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններում նախատեսվող սահմանափակումների հիմնավորումը: Բացի դրանից, նշված դրույթները ներկայիս խմբագրությամբ տարընթերցումների տեղիք են տալիս:

11. Առաջարկում ենք խմբագրել նախագծի 8-րդ հոդվածը, քանի որ վերջինս չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի պահանջներին, որի 2-րդ մասի համաձայն «Եթե իրավական ակտի ընդունման կապակցությամբ անհրաժեշտ է փոփոխություններ կամ լրացումներ կատարել կամ գործողությունը դադարեցնել մինչև այդ ընդունված իրավական ակտերում կամ դրանց որոշ մասերում, ապա դրանք ինքնուրույն իրավական ակտերի մասերի տեսքով շարադրվում են իրավական ակտի նախագծի եզրափակիչ մասում»: Հոդվածի 3-րդ մասի համաձայն «Եթե իրավական ակտի ընդունման կապակցությամբ անհրաժեշտ է փոփոխություններ կամ լրացումներ կատարել մեծ թվով ակտերում կամ դադարեցնել մեծ թվով ակտերի գործողությունը, ապա դրանց ցանկերը ձևակերպվում են առանձին, նույն տեսակի իրավական ակտի տեսքով: Նման ցանկերի նախագծերը պատրաստում են հիմնական ակտի նախագիծը մշակողները և ներկայացնում են դրա

հետ միասին: Փոփոխությունների կամ լրացումների ցանկերը կազմվում են գործողությունը դադարեցնող ցանկերից առանձին՝ ժամանակագրական կարգով:»:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՎԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տարադրամով
վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ**

**«ՀՀ քաղաքացիների տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» ՀՀ
օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«ՀՀ քաղաքացիների տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27՝ և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաօլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանվում են վարկային և փոխառնության պայմանագրային պարտավորությունների վերակառուցման կարգը, արտարժույթային վարկային պայմանագրերով նախատեսված պարտքերի մարման պայմանները, ինչպես նաև վարկային գրավի նկատմամբ վարկատուի կողմից դիմելու կարգը:

Նախագծով կարգավորվող շրջանակներն առնչվում են ծառայությունների մատուցման շուկայի հետ, սակայն Նախագծի ընդունմամբ նշված շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Նախագծով առաջարկվում է պարտավորեցնել վարկատու բանկային, վարկային և այլ կազմակերպություններին՝ տարադրամով հիփոթեքային ապահովմամբ վարկային և փոխառնական չկատարված պայմանագրային պարտավորություններ ունեցող ՀՀ քաղաքացիների դիմումների հիման վրա իրականացնել պարտավորությունների վերակառուցում՝ պայմանագրի օգտագործման համար որոշված վճարումների և վարկային պարտավորությունների մնացորդը ՀՀ ազգային արժույթով վերահաշվարկելու և ամրագրելու միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը հայտնում ենք, որ ֆինանսական ոլորտի տնտեսվարող սուբյեկտների ծախսերի վրա Նախագծի վերջնական ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել միայն վիճակագրական տվյալների և քանակական ցուցանիշների վերաբերյալ մանրամասն տեղեկատվության առկայության պարագայում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ տարադրամով վարկերի վերաձևակերպման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջեային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ այն բանկերը, վարկային և այլ կազմակերպությունները, որոնք վարկատու են հանդիսանում վարկային և փոխառնական պայմանագրերով, ՀՀ այն քաղաքացիների դիմումների հիման վրա, որոնք ունեն տարադրամով հիփոթեքային ապահովմամբ վարկային և փոխառնական չկատարված պայմանագրային պարտավորություններ, պարտավոր են իրականացնել պարտավորությունների վերակառուցում՝ տրամադրված տարադրամային վարկերը վերակառուցելով դրամական վարկերի: Միաժամանակ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ վերակառուցումից և վերահաշվարկից հետո վարկի օգտագործման համար նախատեսված վճարի չափը չի կարող ավելին լինել քան 12.2 տոկոս:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների փոփոխության, որը, սակայն, հնարավոր չէ հաշվարկել, քանի որ հնարավոր չէ կանխատեսել վարկառուների վարքագիծը, ինչպես նաև ՀՀ դրամի արժեզրկման կոնկրետ չափը:

Միաժամանակ Նախագծի ընդունումը ՀՀ պետական և համայնքների բյուջեների ծախսերի, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-731-04.03.2015-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՏԱՐԱԴՐԱՄՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան:

Սույն օրենքը ուղղված է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար ազգային արժույթի փոխարժեքի տատանման բացասական ազդեցության նվազեցմանը, որոնք տարադրամով վարկերի եւ փոխառությունների գծով ունեն կնքված կազմակերպությունների հետ չկատարված պարտավորություններ:

Նվազեցումը իրականացվելու է տարադրամով վարկային եւ փոխառության պայմանագրերով ամրագրված չկատարված պարտավորությունների վերակառուցմամբ եւ տարադրամով տրամադրված վարկերի եւ փոխառությունների վերաձեւակերպմամբ Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի:

Հոդված 2. Վարկային եւ փոխառության պայմանագրային պարտավորությունների վերակառուցում:

Բանկային, վարկային եւ այլ կազմակերպությունները, որոնք վարկատու են հանդիսանում վարկային եւ փոխառնական պայմանագրերով անկախ իրենց կազմակերպահրական ձեւից եւ տեղից, ՀՀ այն քաղաքացիների դիմումների հիման վրա, որոնք տարադրամով հիփոթեքային ապահովմամբ վարկային եւ փոխառնական չկատարված պայմանագրային պայմանավորություններ ունեն, պարտավոր են իրականացնել պարտավորությունների վերակառուցում, սույն օրենքով նախատեսված կարգով եւ պայմաններով:

Վարկատուներին արգելվում է ի շահ իրենց եւ երրորդ անձանց վարկառուներից պահանջել ցանկացած հավելավճար, կանխավճար եւ այլ վճարում, ներկա օրենքով նախատեսված պայմաններով եւ կարգով վարկային եւ փոխառնական պայմանագրային պարտականությունների վերակառուցվածքայնացման ընթացքում:

Հոդված 3. Վարկային եւ փոխառության պայմանագրային պարտավորությունների վերակառուցման կարգը:

Վարկային եւ փոխառության պայմանագրային պարտավորությունների վերակառուցումն իրականացվում է վարկային եւ փոխառնական պայմանագրերով նախատեսված պայմանագրի օգտագործման համար որոշված

վճարումների եւ վարկային պարտավորությունների մնացորդը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով վերահաշվարկման եւ ամրագրման միջոցով, ինչի վերաբերյալ վարկատուի եւ վարկառուի միջեւ արձանագրվում է հավելյալ համաձայնագիր:

Համաձայնագիրը ստորագրվում է երկու կողմերի միջեւ, վերակառուցման վերաբերյալ վարկառուի կողմից վարկատուին դիմելուց հետո, 30 օրացուցային օրը չգերազանցող ժամանակահատվածում:

Վարկային (փոխառնական) պայմանագրային պարտավորությունների չափը ՀՀ ազգային արժույթով (հիմնական պարտավորությունների գումարը , տուգանքների վճարների գծով պարտքեր, կանխավճարներ ցանկացած այլ վճարումներ եւ վարկի տնօրինման վճարային պարտավորություններ, որոշվում է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից վարկային, փոխառնական պայմանագրի կնքման ամսաթվով, տարադրամի եւ ՀՀ ազգային արժույթի պաշտոնական Փոխարժեքի հիման վրա :

Վարկի օգտագործման համար վճարի չափը որոշվում է կողմերի միջեւ վարկավորման (փոխառնական) պայմանագրին հավելյալ համաձայնագրով:

Վերակառուցումից եւ վերահաշվարկից հետո վարկի օգտագործման համար նախատեսված վճարի չափը չի կարող լինել ավելին քան 12,2 տոկոս:

Վարկային (փոխառնական) պայմանագրերի այլ պայմաններ չեն կարող փոխվել վարկառուի համար նախատեսված պայմանների վատթարացման ձեւով:

Այն վճարումները, որոնք կատարվել են վարկային (փոխառնական) պայմանագրով մինչեւ պարտավորությունների վերակառուցման իրականացումը, վերահաշվարկի ենթակա չէ:

Ներկա օրենքին համապատասխան չեղյալ է համարվում վարկառուի պարտականությունների չափի եւ վարկային համաձայնագրով նախատեսված պարտավորությունների միջեւ գումարի տարբերությունը :

Հոդված 4. Արտարժույթային վարկային պայմանագրերով նախատեսված պարտքերի մարման պայմանները:

Տարադրամային վարկային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների վերակառուցման իրականացումից հետո վարկային պարտքերի մարումը իրականացվում է վարկառուի կողմից ազգային արժույթով, հավելյալ պայմանագրի, վճարումների ժամանակացույցի, եւ վարկային (փոխառնական) պայմանագրերին համապատասխան:

Հոդված 5. Վարկային եւ փոխառնության պայմանագրային պարտավորությունների վերակառուցման ժամկետները:

Վարկային եւ փոխառնության պայմանագրային պարտավորությունների վերակառուցումը վարկատուի կողմից իրականացվում է վարկառուի դիմելու օրվանից, ոչ ուշ քան 30 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն օրենքը ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում արգելվում է այն վարկառուների (պարտապանների) անշարժ գույքի պարտադրաբար օտարումը, որոնց վարկային պարտավորությունները պետք է կառուցվածքայնացվեն սույն օրենքի հիմնան վրա:

Վարկառուներին արգելվում է փոխզիջել վարկային եւ փոխառնական պայմանագրերի պահանջի իրավունքը, ինչպես նաեւ փոխանցել իրավունքը երրորդ անձանց առանց վարկառուի գրավոր համաձայնության, սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Հոդված 6. Պարտավորությունների կատարման պայմանների ապահովումը;

Տարադրամով արտահայտված, ֆիզիկական անձանց կողմից, վարկային պարտականությունների չկանոնակարգված կատարման արդյունքում առաջացած տույժերի եւ տուգանքների գումարները, մինչեւ գործող պայմանագրերի վերակառուցման վերաբերյալ հավելյալ համաձայնությունների կնքումը, չեղյալ են համարվում, փոխառնություններով եւ վարկային պայմանագրերով նախատեսված վերակառուցվածքայնացման իրականացման հետ միաժամանակ:

Հոդված 7. Վարկային գրավի նկատմամբ վարկատուի կողմից դիմելու կարգը:

Սույն օրենքի առաջին հոդվածի հիման վրա վերակառուցման իրականացումից հետո, եթե բացակայում են վարկառուի կողմից վարկային պարտավորությունների իրականացման հնարավորությունները, վարկառու դիմումի միակողմանիորեն իրավունք է ստանում գրավի առարկան վարկատուին փոխանցելու համար: Վարկառուն պարտավոր է գրավի առարկան ընդունել դիմումը ստանալուց 30 օրվա ընթացքում:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գրավի առարկան վարկառուին փոխանցելու վարկատուի կողմից հայտարարություն ներկայացնելը հիմք է հանդիսանում վարկով ունեցած պարտավորությունների դադարեցման համար, սկսված վերը նշյալ հայտարարության ներկայացման օրվանից, նույնիսկ եթե գրավի արժեքը բավարար չէ վարկատուի պահանջների լիակատար բավարարման համար: Նշված դեպքում վարկառուի կողմից վարկով ստացված պարտավորությունների գումարի չափի եւ վարկատուի կողմից գրավի առարկայի իրացման արդյունքում ստացված գումարի միջեւ տարբերությունը չեղյալ է համարվում վարկատուի կողմից:

Հոդված 8. Ամփոփիչ դրույթներ

1. Տվյալ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ օրենքները եւ ենթաօրենսդրական ակտերը կիրարկվում են այն մասով, որը չի հակասում տվյալ օրենքին:

2. ՀՀ կառավարությունը սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում կմշակի օրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված քաղաքացիների պարտավորությունների վերակառուցման արդյունքում առաջացած պայմաններում, վարկային եւ բանկային կազմակերպություններին աջակցության գործողությունների ծրագիր:

3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԱՐԱԴՐԱՄՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Դեռեւս անցյալ տարվա վերջից Հայաստանում դրամի արժեզրկումը դուլարի եւ եվրոյի նկատմամբ հանգեցրել էր քաղաքացիների զանգվածային աղքատացման եւ բարդագույն իրավիճակ է ստեղծել տարադրամով վարկեր ունեցող ինչպես ֆիզիկական այնպես էլ իրավաբանական անձանց համար: Հազարավոր մարդիկ արդեն իսկ չեն կարողանում վճարել իրենց վարկային պարտավորությունների համար: Տեղի է ունենում քաղաքացիների անշարժ եւ շարժական գույքի գների անկում, ինչը բարդացնում է մարդկանց կանխատեսելի վիճակը: Ենթադրում են, որ մոտակա ժամանակահատվածում բազմաթիվ անձինք չեն կարողանալու վճարել իրենց դուլարային, հիփոթեքային վարկերով պարտավորությունները, ինչի արդյունքում կարելի է սպասել հիփոթեքային բնակարանների մասսայական վաճառք, ինչը իր հերթին ավելի կիջեցնի անշարժ գույքի լիկվիդայնության մակարդակը: Քաղաքացիները իրենց կամքից անկախ հայտնվել են խիստ վտանգավոր վիճակում: Անվճարունակության եւ հնարավոր սնանկացումների արդեն բարձրացող ալիքը, կարող է հանգեցնել սոցիալական վիճակի բարդացման: Ի հավելումն նշվածի, բանկերը ներկայումս ավելացնելով տնտեսության դուլարացումը, դրամով երկարաժամկետ վարկեր համարյա չեն տրամադրում: Իսկ եթե նույնիսկ տրամադրում են, ապա դուլարով եւ եվրոյով եւ բարձրացված տոկոսադրույքներով: Վարվող քաղաքականությունը նպաստում եւ նպաստելու է դրամի արժեզրկմանը: Տվյալ իրավիճակում անհրաժեշտ են շուտափույթ լուծումներ, առաջին հերթին մեր քաղաքացիների շահերը պաշտպանելու եւ ազգային արժույթի ամրապնդման նպատակով՝ բնականաբար բանկերի համար ունենալով ամորտիզացիոն մեխանիզմներ: Նշված օրենքի նախագիծը ընդունվելու դեպքում, հնարավորություն կընձեռի՝ 1.կամովին կերպով, տարադրամային վարկերը վերակառուցվածքայնացնել դրամական վարկերի, 2.կասեցնել վարկառուների մեծաքանակ սնանկացումները եւ անվճարունակությունը, 3.կանխարգելել սոցիալական լարվածության աճը, 4.ամրապնդել մեր ազգային արժույթի դիրքերը, 5.խուսափել բնակարանային շուկայում գների կտրուկ անկումից եւ այլն: «Օրինաց երկիր» կուսակցությունը,

ուսումնասիրելով արտասահմանյան՝ մասնավորապես Ռուսաստանի, Արեւելյան Եվրոպայի եւ Լատինական Ամերիկայի փորձը, նախաձեռնել է եւ շրջանառության մեջ է դնում օրենքի համապատասխան նախագիծ, մեր քաղաքացիների տարադրամով արտահայտված վարկերի վերակառուցման վերաբերյալ: